

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 27. 10. 2017թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստը կայացավ հեռահար կապի միջոցով: Հաղորդակցություններ են ուղարկվել գիտական խորհրդի 29 (քսանինն) անդամներին:

Առաջարկություններ և համաձայնություններ են ուղարկել գիտական խորհրդի 27 անդամներ:

Նկատի ունենալով հարցի կարևորությունը՝ գիտական խորհրդի նախագահ Ս. Մինասյանի հանձնարարությամբ գիտական խորհրդի անդամները ա. թ. հոկտեմբերի 26-ին էլեկտրոնային փոստի միջոցով իրազեկվել են գիտական խորհրդի արտահերթ նիստի (օրակարգային հարցի բովանդակությանը: Ներկայացված հարցի վերաբերյալ վերջնական որոշումը կայացվել է՝ հիմնվելով ա.թ. հոկտեմբերի 27-ի գիտական խորհրդի 29 անդամից 27 անդամի գրավոր առաջարկների և համաձայնությունների հիման վրա: Գիտական խորհրդի նիստը կայացավ գիտական խորհրդի անդամների կայացրած որոշման տակ ստորագրելու պարագայում:

1. **Մինասյան Սահակ Գարուշի** — Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Պողոսյան Բագրատ Ժորայի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
5. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
6. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ-ուսումնական մասի պետ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** — Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
8. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն

9. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
10. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
11. **Հայրապետյան Սերգո Արտուշի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
12. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
13. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
14. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
15. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
16. **Տեր-Ադամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
17. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
18. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
19. **Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ
20. **Արամյան Կարեն Արմենի** — ՇՊՀ ՈԻԽ նախագահ, ռազմական ամբիոն «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող
21. **Խաչատրյան Լիլիթ Վարդանի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և մեթոդիկա», 4-րդ կուրսի ուսանողուհի
22. **Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
23. **Մխիթարյան Անահիտ Աշոտի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Կիրառական արվեստ» 3-րդ կուրսի ուսանողուհի
24. **Կոստանյան Նինա Կարապետի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Մաթեմատիկա» 4-րդ կուրսի ուսանողուհի
25. **Հարությունյան Քաջիկ Հակոբի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)
26. **Մելքոնյան Արմեն Գրիգորի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)

27. **Չարչօղյան Արթուր Էդվարդի** — Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017թ-ի օգոստոսի 25-ի գիտական խորհրդի «ՇՊՀ-Ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» հարցի վերաբերյալ 14/1 որոշման մեջ պարզաբանումների և լրացումների մասին:

Հաղորդագրության տարածող՝ գիտական քարտուղար Կ. Պետրոսյան

1.ԼՍԵՑԻՆ՝

2017թ-ի օգոստոսի 25-ի գիտական խորհրդի «ՇՊՀ-Ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» հարցի վերաբերյալ 14/1 որոշման մեջ պարզաբանումներ և լրացումներ կատարելու նպատակով ընդհանրացվեցին գիտական խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված կարծիքներն ու առաջարկները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Միասնական մոտեցում ցուցաբերել ստուգման հասկացությունների վերաբերյալ և հետագայում սահմանել ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների վերահսկման ու գնահատման հետևյալ ձևերի անվանումները.
 - ✓ Ընթացիկ ստուգում
 - ✓ Միջանկյալ ստուգում
 - ✓ Ամփոփիչ / հանրագումարային /ստուգում:
2. Գնահատման բաղադրիչներից ակտիվությունը հաշվարկել գնահատված ընթացիկ ստուգումների (գրավոր, բանավոր՝ միտված դասընթացի վերջնարդյունքներին) միջին թվաբանականով: Վերջիններս գրառել մատյանում և դրանց թիվը որոշել վերջնարդյունքների քանակով:
3. Ընթացիկ ստուգման վերահանձնում չի թույլատրվում:
Ընթացիկ ստուգումից հարգելի պատճառով բացակայության դեպքում մինչև հաջորդ ստուգումը թույլատրվում է հանձնելու նախորդը:
4. Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64 և ավելի է, համարել միջանկյալ ստուգումներով ավարտվող 3 գործոնով դասընթաց և «ստուգում 1», «ստուգում 2» տերմինները փոխարինել «միջանկյալ ստուգում 1», «միջանկյալ ստուգում 2»

տերմիններով: Այս դեպքում արդյունաբար գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\text{արդյուն. գն.} = \text{«ակտիվ. գն»} * 0.4 + \text{«միջ. ստուգ. 1 գն.»} * 0.3 + \text{«միջ. ստուգ. 2 գն.»} * 0.3$$

Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64-ից պակաս է, համարել ամփոփիչ ստուգմամբ ավարտվող 2 գործոնով դասընթաց: Այս դեպքում արդյունաբար գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\text{արդյուն. գն.} = \text{«ակտիվ. գն»} * 0.4 + \text{«ամփոփիչ ստուգ. գն.»} * 0.6$$

5. Եթե ուսանողի արդյունաբար գնահատականը 40 և ավելի է, ապա ուսանողը ստանում է համապատասխան կրեդիտը՝ առանց վերահանձման հնարավորության, իսկ եթե այն 40-ից պակաս է, ապա ուսանողը վերահանձնում է կամ ամփոփիչ ստուգումը (2 գործոնի դեպքում) կամ համապատասխան միջանկյալ ստուգում /ները (3 գործոնի դեպքում):
6. Արդյունաբար գնահատականը հաշվելիս վերահանձնված ստուգման միավորը փոխարինում է համապատասխան միավորին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: